Անհատական պահատեղի վարձակալության դիմում-պայմանագրի ձև

Հաճախորդ	**ՀՀ քննչական կոմիտեն, ի դեմս գլխավոր քարտուղար Գևորգ Սերյոժայի Խաչատրյանի** (անձը հաստատող փաստ. (տեսակ, սերիան, համարը, երբ և ում կողմից է տրվել)	02631263	Դիմում-պայմանագիր թիվ **04**

ՀԱՀՀ

1. Սույնով Հաճախորդը առաջարկում է «Արդշինբանկ» ԲԲԸ-ին (այսուհետ նաև՝ Բանկ), իր հետ կնքել անհատական պահատեղի վարձակալության պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր)՝ Բանկի բանկային ծառայությունների մատուցման ընդհանուր պայմաններով (այսուհետ՝ Պայմաններ), «Արդշինբանկում դեպոզիտային պահատուփերի վարձակալության և սպասարկման պայմաններով» (այսուհետ՝ Սակագներ) և սույն դիմում-պայմանագրում նշված պայմաններով և վարձակալությամբ տրամադրել անհատական պահատեղ՝ արժեքների տեղադրման և պահպանման համար՝ ստորև բերված պայմաններով.

Պահատեղի համար թիվ	**110116**	Վարձակալության ժամկետ	**365** օր	Ժամկետի ավարտ	**20/01/2027** թ.
	պահատեղի բանալու համար				
Անհատական պահատեղը գտնվելու վայր	**ք. Երևան, Կոմիտաս պող 3**			Պահատեղի չափը	**155x550x425**
	Բանկի մասնաճյուղի (ՀՍԿ/ՀԱԿ) հասցե (քաղաք, փողոց, տուն)				

2. Հաճախորդը ընդունում է, որ Բանկի կողմից սույն դիմում-պայմանագրում նշված առաջարկը ակցեպտավորելու դեպքում սույն դիմումը, Պայմանները և Սակագները յուրաքանչյուրն առանձին-առանձին կամ միասին, կազմում են Բանկի և Հաճախորդի միջև կնքված Պայմանագիր՝ ամբողջությամբ ընդունելով դրանցում նշված պայմանները: Հաճախորդը ընդունում է, սույն Պայմանագիրը կնքված, իսկ առաջարկը ակցեպտավորված է համարվում սույն դիմում-պայմանագրի կատարման ուղղությամբ գործողություններ կատարելու, այն է Սակագներով սահմանված վճարումը կատարվելուց հետո սույն դիմում-պայմանագրի 1-ին կետում նշված պահատեղի բանալիները սահմանված կարգով Հաճախորդին հանձնելու կամ բանալիները Հաճախորդին հանձնելու վերաբերյալ համաձայնություն ձեռք բերելու պահից:

3. Հաճախորդը սույնով հաստատում է, որ ծանոթացել է Պայմաններին և Սակագներին, տեղեկացված է, որ դրանք հրապարակված են Բանկի **www.ardshinbank.am** կայքում, և ընդունում է, որ սույն դիմում-պայմանագրի հիման վրա Պայմանագրի կնքման դեպքում, Պայմանները և Սակագները կհանդիսանան Պայմանագրի անբաժանելի մաս: Հաճախորդը ընդունում է, որ Պայմանները և Սակագները Բանկի կողմից կարող են ժամանակ առ ժամանակ միակողմանիորեն փոփոխվել՝ Պայմաններով սահմանված կարգով:

4. Հաճախորդը տեղեկացված է, որ 1) առանց Հաճախորդի լրացուցիչ համաձայնության Պայմանագրին համապատասխան Հաճախորդին վարձակալությամբ հանձնված պահատեղը բացելու դեպքերը, 2) Պայմանագրի շրջանակներում Հաճախորդի **Բանկում սպասարկվող բանկային հաշիվներից անակցեպտ գանձման դեպքերը, 3) ինչպես նաև Բանկի կողմից Պայմանագիրը միակողմանիորեն դադարեցնելու դեպքերը սահմանված են** Պայմաններով և սույնով ևս հաստատում է իր համաձայնությունը Պայմաններով սահմանված համապատասխան դրույթներին:

5. Կողմերը պայմանավորվում են, որ սույն դիմում-պայմանագրի ակցեպտավորմամբ կնքվող Պայմանագրի շրջանակներում.

5.1 Բանկի հաշվետեր լինելու (բանկային հաշիվ ունենալու)՝ Սակագներով սահմանված պահանջը Հաճախորդի վրա չի տարածվում, իսկ Հաճախորդը Պահատեղի վարձակալության համար Սակագներով սահմանված վճարը (սակագինը) վճարում է Բանկի 2470038410270000 հաշվին փոխանցման միջոցով՝ սույն դիմում-պայմանագրի ստորագրման օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում,

5.2 Արժեքները Պահատեղում տեղադրվում են Հաճախորդի կողմից լիազորված անձի/անձանց կողմից (ովքեր կարող են չնույնանալ սույն դիմում-պայմանագիրը ստորագրող Հաճախորդի անունից հանդես եկող իրավասու անձի հետ)՝ սույն դիմում-պայմանագրի 5.1 կետով սահմանված կարգով վճարում կատարելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում,

5.3 Սակագներով սահմանված պահատվության ժակետի հաշվարկը սկսվում է սույն դիմում-պայմանագրի ստորագրման օրվանից,

5.4 Պահատեղի բանալին Հաճախորդին տրամադրվում է Սակագնի վճարումից հետո՝

5.4.1 սույն դիմում-պայմանագրի 5.2 կետով սահմանված՝ արժեքները Պահատեղում տեղադրող լիազորված անձին կամ

5.4.2 մինչ արժեքները պահատեղում տեղադրելը՝ Հաճախորդի անունից հանդես եկող իրավասու անձին;

5.5 Ծառայությունների մատուցման վերաբերյալ Պայմանագրի ստորագրման պահին Կողմերի միջև ստորագրվում է Հանձնման-ընդունման ակտ (արձանագրություն), որով հաստատվում է Պահատեղը փաստացի Հաճախորդի վարձակալության հանձնելը: Հանձնման-ընդունման ակտը հանդիսանում է սույն դիմում-պայմանագրի ակցեպտավորմամբ կնքվող Պայմանագրի անբաժանելի մասը:

6. Սույն դիմումը-պայմանագիրը կազմված, լրացված ու ստորագրված է հայերենով, 2 (երկու) հավասար օրինակներից, որից մեկ օրինակը հանձնվում է Բանկին, իսկ երկրորդ օրինակը մնում է Հաճախորդի մոտ:

Հաճախորդի անունից հանդես եկող իրավասու անձ **Գևորգ Խաչատրյան** ✓ ամսաթիվ **20/01/2026** թ.

«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ԲԲԸ
0015, ՀՀ, ք. Երևան, Գ. Լուսավորիչ 13 փ.
Հեռ.՝ +37412 222222,
Կայքի հասցե՝ www.ardshinbank.am,
Էլ. փոստի հասցե՝ ashb@ardshinbank.am

	անուն, ազգանուն	ստորագրություն		
		ԼՐԱՑՎՈՒՄ Է ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ		
Սպասարկող պաշտոն	ՊԱՊՈՅԱՆ ԲԱԲԿԵՆ անուն, ազգանուն	ստորագրություն	ամսաթիվ	20/01/2026 թ.
ՀՍԲ պետ/փոխարինող անձ պաշտոն	ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ անուն, ազգանուն	ստորագրություն	ամսաթիվ	20/01/2026 թ.
Մասնաճյուղի կառավարիչ (ՀՍՎ/ՀԱՎ պետ)/փոխարինող անձ պաշտոն	ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ ԲՈՒԴԱՂԻ անուն, ազգանուն	ստորագրություն	ամսաթիվ	20/01/2026 թ.
Բանկի մասնաճյուղ (ՀՍՎ/ՀԱՎ)	ԱՐԴՇԻՆԲԱՆԿ «Գյուլբենկյան» մասնաճյուղ	Էլ. փոստի հասցե		
Կ.Տ.				

«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ
«ARDSHINBANK» OJSC
(09968192) 10343